

Մասնագիտություն – Ն/Դ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
Կուրս/կիսամյակ - II /II

Նախադպրոցական մանկավարժություն

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրեդիտ/կրեդիտ ժամ – 6 կրեդիտ / 180
կրեդիտ-ժամ
Ընդհանուր լսարանային ժամեր - 64
Դասախոսություն - 24
Մեմինար պարապմունք – 28
Գործնական -
Ուսումնական պրակտիկա-12
Շաբաթական ժամ -4

1. Նախադպրոցական կրթության նպատակն ու խնդիրները
2. Նախադպրոցական մանկավարժության հիմունքները
3. Ն/դ դաստիարակության զարգացման ժամանակակից տեսությունը
4. Մանկավարժ դաստիարակի սոցիալական գործառույթները և մանկավարժի ընդհանուր նկարագիրը
5. Խաղը որպես գործունեության առաջատար ձև նախադպրոցական տարիքում: Խաղային տեխնոլոգիա
6. Հեքիաթների ազդեցությունը նախադպրոցականի հոգեկան զարգացման գործընթացում

Դասախոս՝ Նաիրա Գրիգորյան

Նախադպրոցական կրթության նպատակն ու խնդիրները

Նախադպրոցական տարիքային մանկավարժության առաջին օղակն է, որն ուսումնասիրում է նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման, դաստիարակության և ուսուցման օրինաչափություններն ու առանձնահատկությունները: Նախադպրոցական մանկավարժության գիտական հիմնադիրն է Յան Ամոս Կոմենսկին, որն առաջինը իր «Մայրական դպրոց» գիտամեթոդական աշխատության մեջ ներկայացրեց նախադպրոցականի դաստիարակության մանկավարժական մոտեցումների համակարգ Ա մեթոդական հանձնարարականները ժամանակակից նախադպրոցական մանկավարժությունը զարգանում է բուռն տեմպերով, մի շարք հարակից գիտությունների հետ փոխկլուսաված, որոնց գիտական տվյալներն ու արդյունքները լրամշակում և հարստացնում են նախադպրոցական մանկավարժության գիտական հենքը (բազան): Անքակտելի է նախադպրոցական մանկավարժության կապը հոգեբանոէ* թյան հետ, մասնավորապես՝ տարիքային Ա մանկավարժական հոգեթանուէ թյան, զարգացման և անձի հոգեբանության, ինչպես և սոցիալական և կիրառական հոգեբանության հետ: Նախադպրոցական մանկավարժությունը սերտ կապված է մի շարք կենսաբանական և բժշկական գիտությունների հետ, որոնց ուսումնասիրության օբյեկտը, ինչպես և մանկավարժությանը, մարդն է, երեխան: Դրանցից են. անատոմիան և ֆիզիոլոգիան, գենետիկան և Էկոլոգիան, բժշկագիտությունը, մանկաբուժությունն ու հիգիենան: Իբրև հումանիտար գիտություն նախադպրոցական մանկավարժությունն առնչվում է հասարակական գիտություններից՝ փիլիսոփայության և մարդաբանության, սոցիոլոգիայի, բարոյագիտության և գեղագիտության հետ: Հետաքրքիր է նաև նախադպրոցական մանկավարժության համագործակցությունը ճշգրիտ գիտությունների հետ, որոնց հստակ մեթոդներն ու գնահատման եղանակները ներթափանցում են նախադպրոցական մանկավարժության ոլորտ զգալի արագությամբ և նպաստում մանկավարժական ցանկացած գործընթացի նախնական մոդելի մշակմանը և գիտափորձի արդյունքների օբյեկտիվ գնահատմանը: Բնականաբար, նախադպրոցական մանկավարժությունը զարգանում է մանկավարժական գիտությունների հետ սերտ կապված, հիմք ընդունելով դրանց տեսական հիմունքները և մեթոդական առանձնահատկությունները: Նախադպրոցական

մանկավարժության անբաժանելի մասն են կազմում նախադպրոցականի դաստիարակության մասնավոր մեթոդիկաները.

երեխայի խոսքի զարգացման տեսությունը և մեթոդիկան;

երեխայի ֆիզիկական դաստիարակության տեսությունը և մեթոդիկան;

երեխայի երաժշտական դաստիարակության տեսությունը և մեթոդիկան;

երեխայի մաթեմատիկական պատկերացումների զարգացման տեսությունը և մեթոդիկան;

նախադպրոցականի էկոլոգիական կրթության տեսությունը և մեթոդիկան;

մանկան ստեղծագործության զարգացման տեսությունը և մեթոդիկան:

Նախադպրոցական կրթությունը կրթական համակարգի առաջին օղակն է, որի հաջողություններով է պայմանավորված ողջ կրթական համակարգի առաջընթացը: Կրթական ցանկացած բարեփոխում սկիզբ է առնում և փորձարկվում է նախադպրոցական կրթության ոլորտում: Նախադպրոցական կրթության տարաբնույթ խնդիրների մշակմամբ և իրականացմամբ զբաղվում է նախադպրոցական մանկավարժությունը: Նախադպրոցական մանկավարժության գիտական ուսումնասիրությունների դաշտն են կազմում մանկավարժական այն բոլոր գործընթացները, որոնք ուղղված են նախադպրոցահասակ երեխաների զարգացմանն ու կրթությանը: Նախադպրոցական մանկավարժության առարկան է նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության և ուսուցման գործընթացների համակարգը: Գիտության կարևորագույն գործառույթները բխում են գիտության առարկայից և կանխորոշում են մանկավարժական խնդիրների իրականացման մոտեցումներն ու առանձնահատկությունները:

Նախադպրոցական մանկավարժության հիմնական գործառույթներն են.

նախադպրոցական կրթության համակարգի զարգացման ուղղությունների կանխատեսումը և նախագծումը;

նախադպրոցական կրթության չափորոշիչի մշակումը;

նախադպրոցական դաստիարակության հայեցակարգի, նոր մոտեցումների և տեխնոլոգիաների մշակումը;

նախադպրոցականի ուսուցման և կրթության տեսության և մեթոդիկայի կատարելագործումը, ուսուցման ժամանակահունչ եղանակների մշակումը;

Նախադպրոցականի համակողմանի զարգացման մանկավարժական պայմանների ապահովումը;

«ընտանիք-մանկապարտեզ» հարաբերությունների լրամշակումը, համագործակցության նոր եզրերի մշակումը:

Ամփոփելով նախադպրոցական մանկավարժության գործառույթները, կարելի է նշել, որ դրանք կրթող, դաստիարակող և ուսուցանող բնույթի են և ուղղված են նախադպրոցականի լիարժեք ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացմանը: Նախադպրոցական մանկավարժության գործառույթներից օրինաչափորեն առանձնացվում են նախադպրոցական մանկավարժության նպատակն ու խնդիրները:

Նախադպրոցական մանկավարժության հիմունքները

Հիմնական հասկացությունները՝ դաստիարակություն, դաստիարակության մեթոդներ, ուսուցման մեթոդներ, կրթություն, կրթության բովանդակություն, մանկավարժական գործընթաց, կրթական պետական ստանդարտ, երեխաների սոցիալական պաշտպանություն

Նախադպրոցական մանկավարժության առաջացումը կապված է XVIIդ. չեխ մանկավարժ և փիլիսոփա Յա. Ա. Կոմենսկու անվան հետ: Իր գիտական աշխատություններում՝ «Համընդհանուր խորհուրդ», «Մեծն դիդակտիկա», «Մայրական դպրոց», նա արտացոլել է երեխաների դաստիարակության և ուսուցման նպատակներն ու խնդիրները, ձևերն ու մեթոդները: Դաստիարակության նպատակ նա համարում էր՝ արտաքին աշխարհի ճանաչումը, առարկաներին և սեփական անձին տիրապետելու ունակության, բարոյական որակների զարգացումը:

Դաստիարակության բաղկացուցիչ մասերի թվին Յ. Ա. Կոմենսկին դասում էր՝ կրոնական, բարոյական, գիտական կրթությունը, ընդհանուրի և անհատականի ամբողջությունը, անձի համակողմանի զարգացումը, հոգևոր կյանքի ուսումնասիրությունը և դրա համապատասխանությունը մանկավարժական ազդեցություններին, դաստիարակության և ուսուցման ամբողջականությունը, հաջորդականության և հետզհետեականության սկզբունքին, երեխաների տարիքին ուսուցման աղբյուրների համապատասխանելիության սկզբունքներին հետևելը, ճանաչելիության 3 աղբյուրների՝ հավատքի, զգացմունքի և գիտակցության ամբողջության գիտակցումը: Յ. Ա. Կոմենսկու մանկավարժական գաղափարների հետևորդ դարձավ ռուսական մանկավարժության հիմնադիր Կ. Դ. Ուշինսկին:

Աշխատանքի, ստեղծագործության, մարդկանց նկատմամբ երեխաների մոտ դրական վերաբերմունք ձևավորելու գաղափարներ գտնում ենք Ե. Ի. Իյինի, Վ. Ֆ. Շատալովի, Ս. Ի. Լիսենկովայի, Ի. Պ. Պողյասնիի, Ֆ. Ա. Ֆրադկինի, Վ. Վ. Կրասնկու աշխատություններում: Խոսելով Ռուսաստանում մանկավարժական մտքի զարգացման մասին, անհրաժեշտ է կանգ առնել Ն. Կ. Կրուպսկայայի, Ա. Ա. Մակարենկոյի, Վ. Ա. Սուխամլինսկու մանկավարժական հայացքների վրա, հատվածներ մեջ բերել նրանց աշխատություններից, բացատրել նրանց խոսքերը,

օրինակ Ա. Ս. Մակարենկոյի՝ «մանկավարժությունը ամենաշարժուն և դիալեկտիկ գիտությունն է», Կ. Դ. Ուշինսկին կարծում էր, որ «մանկավարժությունը արվեստ է»:

Նախադպրոցական մանկավարժությունը որպես գիտություն ունի իր առարկան, խնդիրները, գործառույթները, աղբյուրները, մեթոդները, կատեգորիաները: Նախադպրոցական մանկավարժությունը ուսումնասիրում է ուսուցման և դաստիարակության գործընթացը, դրա նպատակները, խնդիրները, բովանդակությունը, սոցիալականացման ձևերը, իրականացման տեխնոլոգիան, երեխայի անձի զարգացման վրա դաստիարակության, ուսուցման և կրթության ազդեցությունը:

Նախադպրոցական մանկավարժության առարկան դաստիարակության գործընթացն է, նրա նպատակը, խնդիրները, բովանդակությունը, ձևերը, մեթոդները, նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության միջոցները:

Նախադպրոցական մանկավարժության օբյեկտն է երեխան ծնվելուց մինչև նախադպրոցական տարիք ընկած ժամանակահատվածը, որի զարգացումը պայմանավորված է դաստիարակչական հարաբերություններով:

Նախադպրոցական մանկավարժության խնդիրներն են՝

նպաստել երեխաների դաստիարակությանն ու ուսուցմանը ծվելուց մինչև դպրոցական տարիք (տեսական և պրակտիկ ասպեկտ) ժամանակակից հասարակության պահանջներին համապատասխան;

ուսումնասիրել կրթական գործընթացի տենդենցներն ու հեռանկարները, որպես երեխաների ուսուցման և դաստիարակության հիմնական ձև;

մշակել նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման և դաստիարակության նոր հայեցակարգեր և տեխնոլոգիաներ:

Նախադպրոցական մանկավարժության գործառույթներն են՝ նկարագրող-կիրառականը (դաստիարակության ծրագրերի, կրթական գործընթացի տեխնոլոգիաների և մոդելների գիտական նկարագրությունը), կանխատեսողը (կրթական գործընթացի թարմացման և մոդեռնիզացման, կատարելագործման ճանապարհների գիտական կանխատեսումը), ստեղծագործ-վերափոխողը (կանխատեսումը, գիտական հետազոտությունների անցկացումը, նոր տեխնոլոգիաների ստեղծումը):

Նախադպրոցական մանակավարժության աղբյուրներն են՝ ժողովրդական մանակավարժությունը, կրոնական մանակավարժությունը, մանակավարժության արտասահմանյան և հայրենական պատմությունը, մանակավարժական պրակտիկան, էքսպերիմենտալ հետազոտությունները, հարակից գիտությունների տվյալները (երեխաների հոգեբանությունը, անատոմիան և ֆիզիոլոգիան, հիգիենան և այլն), մանակավարժ-նորարարների գաղափարների ազդեցությունը ուսուցման և դաստիարակության տեսության և պրակտիկայի զարգացման վրա:

Նախադպրոցական մանակավարժության *մեթոդաբանական հիմունքները* արտահայտում են փիլիսոփայության ժամանակակից մակարդակը, կառուցվում են հետևյալ փիլիսոփայական ուղղությունների վրա՝ *աքսիոլոգիկ մոտեցում, համակարգային, գործնական-ստեղծագործական, անձնային, մշակութային, սինթետիկ*: Տեսական մեթոդոլոգիական մոտեցումները կոնխորդում են մանակավարժի հայացքը, ոճը, դիրքորոշումը, նրա վերաբերմունքը երեխայի անձի նկատմամբ, այնպիսի կատեգորիաների փիլիսոփայական ընկալումը, ինչպիսիք են՝ դաստիարակությունը, զարգացումը, ձևավորումը, ուսուցումը:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում ուսանողները պետք է իմանան դաստիարակության փիլիսոփայական հիմքերի էությունը:

Աքսիոլոգիկ մոտեցումը կայանում է դաստիարակության, կրթության և ինքնակրթության արժեքների ընկալման մեջ, ընդգրկում է առողջության, մշակույթի, ճանաչողության, շփման, խաղի, աշխատանքի ձևավորումը որպես երեխաների դաստիարակության չինացող արժեքներ:

Մշակութային մոտեցումը ընդգրկում է երկրի, շրջանի, մոտակա բնակավայրի պատմությունը: Մշակույթների երկխոսությունը երեխաներին մշակութային ավանդույթներին, սովորույթներին, նորմերին և կանոններին ծանոթացնելու հիմքն է:

Համակարգային մոտեցումը ենթադրում է նախադպրոցականների դաստիարակության և ուսուցման փոխկապակցված և փոխապայմանավորված նպատակների, խնդիրների, բովանդակության, պայմանների և մեթոդների կազմակերպման ձևերի ամբողջական համակարգը:

Գործնական մոտեցումը կանխորոշում է առաջատար գործունեության հիմնական գործողությունների դերը, որոնք ապահովում են երեխայի

պահանջմունքների իրագործումը, որոնք էլ օգնում են երեխային գիտակցել իրեն որպես սուբյեկտ, ակտիվ ստեղծագործող (Լ. Ս. Վիգոտսկի, Ա.Ն. Լեոնտև, Ա. Վ. Զապորոժեց, Դ. Բ. Էլկոնին): Խաղը որպես դպրոցականների առաջատար գործունեություն շատ մեծ նշանակություն ունի նրա զարգացման գործում:

Անձնային մոտեցումը ապահովում է երեխայի պահանջմունքների, հետաքրքրությունների, հակումների զարգացումը, դիտարկում է նախադպրոցական շրջանը որպես ինքնարժեք: Երեխան զարգանում է գործունեության մեջ, այդ իսկ պատճառով այս մոտեցումը գիտնականները սահմանում են որպես գործնական-անձնային:

Միներգետիկան աշխարհընկալման նոր տեսակ է: Դրա մեջ ներառված է 3 հիմնական գաղափար՝ 1) աշխարհի համակարգվածության, ամբողջականության և նրա վերաբերյալ գիտական գիտելիքի, նյութական և հոգևոր մշակույթի բոլոր մակարդակների օբյեկտների զարգացման օրինաչափությունների ընդհանրության գաղափարը; 2) անհամաչափելիության՝ բազմատարբերակայնության, այլընտրանքայնության, անդառնալիության գաղափարը; 3) պատահականության և անհրաժեշտության խորը փոխադարձ կապին վերաբերող գաղափարը: Միներգետիկայի օրենքների համաձայն երեխայի կողմից ճանաչվող աշխարհը բարդ է կառուցված, լի է անսպասելիություններով, որոնք պայմանավորված են հետագա զարգացման ընտրությամբ: Միներգետիկայում գործում են սեփական օրենքները, որոնք նախադպրոցական կրթության տեսանկյունից արտացոլվում են «մանկավարժ-երեխա» համակարգում երեխայի ինքնակազմակերպման և մանկավարժի հետ մշտական հետադարձ կապի ունակության մեջ: Այսպես, պարապմունքի ժամանակ մանկավարժը հարցերի միջոցով պարզաբանում է թե ինչքանով է յուրացված հին նյութը, և դրա հետագա բացատրությունը մեծամասամբ կախված է երեխայի կողմից նախորդող գիտելիքների յուրացման արդյունքներից: *Միներգետիկ մոտեցումը* մանկավարժական գործընթացի յուրաքանչյուր մասնակցի (մանկավարժ, ծնող, դաստիարակվող) դիտարկում է որպես ինքնազարգացող ենթահամակարգի սուբյեկտ: Կրթական գործընթացի յուրաքանչյուր սուբյեկտ զարգացումից կարող է անցնել ինքնակազմակերպման, ինքնազարգացման, ինքնակատարելագործման:

Ուսումնասիրելով թեման, անհրաժեշտ է իմանալ հիմնական մանկավարժական հասկացությունները:

Զարգացումը քանակական և որակական այն փոփոխությունների գործընթացն է, որոնք տեղի են ունենում տարբեր գործոնների, այդ թվում դաստիարակության ազդեցության տակ:

Հարստացված զարգացումը երեխայի բոլոր պոտենցիալ անհատական հնարավորությունների զարգացումն է:

Ձևավորումը երեխայի կենսագործունեության հատուկ կազմակերպված դեկլարումն է, հաշվի առնելով որոշ գործոններ՝ արտաքին և ներքին, բնական և սոցիալական, օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Ուսուցումը մանկավարժի կողմից երեխային գիտելիքների փոխանցման նպատակաուղղված, հատուկ կազմակերպված գործընթացն է, այդ գիտելիքների վերամշակումն ու նոր գիտելիքների ստեղծումը, երեխաների մոտ հատուկ գիտելիքների, ունակությունների և հմտությունների, սոցիալ-բարոյական սովորությունների ձևավորումը:

Մեթոդը դրված նպատակին հասնելու ճանապարհն է, խնդիրների լուծման եղանակը:

Դաստիարակության մեթոդները դաստիարակի և երեխաների հատուկ կազմակերպված փոխազդեցությունն է մանկավարժական խնդրի լուծման նպատակով դաստիարակվողների գիտակցության, զգացմունքների, վարքի վրա ազդելու ճանապարհով:

Ուսուցման մեթոդները մանկավարժի և ուսուցանվողների հաջորդական փոխկապակցված այն գործողությունների համակարգն է, որոնք ապիովում են կրթության բովանդակության յուրացումը:

Կրթության բովանդակությունը այն գիտելիքների, ունակությունների և հմտությունների համակարգն է, որոնց տիրապետելը ապահովում է երեխաների մտավոր և ֆիզիկական ուժերի ներդաշնակ զարգացումը, նախապատրաստում է նրանց գործունեության մեջ ակտիվ մասնակցությանը:

Մանկավարժական գործընթացը մանկավարժի և դաստիարակվողների գիտակցաբար կազմակերպված, նպատակաուղղված և պլանավորված փոխազդեցությունն է երեխաների դաստիարակության և ուսուցման նպատակով:

Կրթությունը անձի նպատակաուղղված ուսուցման և դաստիարակության գործընթացն է, որը բխում է հասարակության և պետության շահերից:

Պետական կրթական ստանդարտ – նախադպրոցական հաստատությունների համար կրթական մարմինների կողմից երաշխավորված ծրագրերի յուրացման պարտադիր մակարդակ:

Զարգացնող առարկայական միջավայր – առարկայական միջավայրերի համակարգ, որոնք հարստացված են խաղերով, խաղալիքներով, ձեռնարկներով և սարքավորումներով, երեխաների ինքնուրույն ստեղծագործական գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ նյութերով:

Երեխաների սոցիալական պաշտպանություն – սա իրավական, տնտեսական, բժշկական և հոգեբանամանկավարժական միջոցառումների կոմպլեքս է, որոնք ապահովում են երեխաների օպտիմալ կենսաբանական և սոցիալական զարգացումը, հարմարեցումը սոցիալ-տնտեսական պայմաններին:

Մանկավարժական տեխնոլոգիան գիտություն է վարպետության մասին, պրակտիկ գործունեության արվեստ է:

Նախադպրոցական մանկության շրջանի ինքնարժեքությունը կայանում է մանկության որպես առանձնահատուկ, մարդու կյանքում ինքնարժեք շրջանի ընկալման մեջ: «Մանկություն» հասկացության սահմանումը առաջացել է միայն XVIIIդ. սկզբում: Այս ընթացքում մանկությունն ընկալվում էր մեծերի կողմից որպես նորմայից յուրահատուկ շեղում, որի տակ ընկալվում էր հասունությունը: Հասուն էր համարվում այն երեխան, որը սկսում էր հաճախել դպրոց և անցնում էր ուսուցման:

Հասարակության պատմության մեջ գոյություն ունեւ *մանկության հանդեպ մեծերի վերաբերմունքի 6 տեսակ*: Դրանք էին՝ նախնական ինֆանտիցիդը; մեծերի կողմից երեխաներին լքելը; երեխաների ընկալումը որպես նյութի, որը պիտանի է մեծերի կողմից մանկական բնության ցանկացած վերափոխումների համար; Լուսավորության դարաշրջանում ճիշտ կազմակերպված դաստիարակության ձևերի չափազանցումը; XIXդ. հասարակության «վերնների» և «ներքևների» երեխաների սոցիալականացումը; օգնություն ընտանիքին և մանկության պաշտպանություն երեխայի անհատականության պահպանման դեպքում՝ XXդ. II կեսին:

Ժամանակակից նախադպրոցական մանկավարժության մեջ որպես մեթոդոլոգիական կողմնորոշիչներ կարելի է առանձնացնել մանկության հետևյալ հայեցակարգերը:

Դ. Բ. Էլկոնինի հայեցակարգ: Մանկության բնությունը դիտարկվում է կոնկրետ պատմական պայմանների ենթատեքստում, որոնք որոշում են մարդու մանկության զարգացումը, օրինաչափությունները, առանձնահատկությունը և փոփոխության բնույթը: Մանկությունը դիտարկվում է մարդու կենսագործունեության մեջ սոցիալ-հոգեբանական պահանջմունքների բավարարման մարդկային միջոցների ձեռքբերման, մարդկային մշակույթի տիրապետման համար: Մեծի դերն այստեղ հետևյալն է՝ օգնել երեխային մայրենի լեզվի, պրակտիկ գործողությունների, մշակույթի տիրապետման հարցում:

Դ. Ի. Ֆելդշտեյնի հայեցակարգը հիմնվում է այն հանգամանքի վրա, որ մանկությունը սոցիալական աշխարհի առանձնահատուկ երևույթ է: *Գործնականորեն* մանկությունը հասարակության զարգացման համակարգում անհրաժեշտ վիճակ է, աճող սերնդի հասունացման, ապագա հասարակության վերարտադրությանը նախապատրաստելու գործընթացի վիճակն է: *Բովանդակայնորեն* մանկությունը մշտական ֆիզիկական աճի, հոգեբանական նորագոյացությունների կուտակման, շրջապատող աշխարհում սեփական կողմնորոշման, մեծերի և այլ երեխաների հետ մշտապես ընդլայնվող և բարդացող փոխհարաբերություններում և կոնտակտներում սեփական ինքնակազմակերպման գործընթացն է: *Էականորեն* մանկությունը սոցիալական զարգացման առանձնահատուկ վիճակ է, երբ երեխայի տարիքային փոփոխությունների հետ կապված կենսաբանական օրինաչափությունները էականորեն արտահայտում են իրենց ազդեցությունը, ենթարկվելով սոցիալականի առավել կարգավորվող և կանխորոշող ազդեցությանը:

Շ. Ա. Ամոնաշվիլիի հայեցակարգը հիմնված է այն հանգամանքի վրա, որ մանկությունը սահմանվում է որպես անսահմանություն և անկրկնելիություն, որպես հատուկ միսսիա սեփական անձի և մարդկանց համար: Երեխան բնությունից օժտված է հնարավորությունների և ունակությունների անհատական անկրկնելի համադրությամբ:

Մեծը պետք է օգնի նրան մեծանալ, ստեղծի բարյացակամության և հոգատարության պայմաններ, և այդ ժամանակ երեխան դառնալով մեծ, կրերի իրեն շրջապատող մարդկանց ուրախություն: «Մարդը պետք է մարդուն, մարդիկ ծնվում են միմյանց համար: Հենց նույն կյանքը, որը եռում է իր կանոններով, կոչ է անում անհրաժեշտ ծնունդին: Հենց նա էլ ծնվում է իր միասիայով» (Ամոնաշվիլի Շ. Ա. «Մտորումներ մարդասիրական մանկավարժության վերաբերյալ», Մ., 1995, էջ 12-13):

Վ. Տ. Կուդրյակցևի հայեցակարգում մանկությունը կանխորոշում է մշակութային ամբողջության գոյությունը և առանձին անհատի ճակատագիրը: Առանձնացվում են 2 փոխկապակցված խնդիրներ, որոնք լուծում է երեխան՝ մշակութայնությունը և մշակութաստեղծումը, այս նույն խնդիրները լուծում է նաև մեծը, որը պաշտպանում և հարստացնում է մշակույթի հետ երեխայի փոխգործունեությունը: Դրանց լուծման արդյունք երեխաների և մանկավարժի համար կլինի *մանկության սուբմշակույթը*:

Մանկական սուբմշակույթի կայացման համար մանկության ընկալման գաղափարը ուսումնասիրվում է շատ հետազոտողների կողմից: Այսպես, Մ. Ս. Կազանը, կանխորոշելով մանկության բնությունը, առանձնացնում է դրա 2 շերտ: Առաջինը՝ մանկության սուբմշակույթը՝ միջավայրը, շրջապատող աշխարհը, մշակութային ձևերը, որոնք ստեղծվում են մեծի կողմից երեխայի համար: Երկրորդ՝ մանկական սուբմշակույթի՝ այսինքն երեխայի սեփական գործունեության ձևի արտացոլումն է: *Մանկական սուբմշակույթը* այն ամենն է, ինչը ստեղծված է մարդկային հասարակության կողմից երեխաների համար և երեխաների կողմից:

Վ.Վ. Աբրամենկովայի կարծիքով մանկական սուբմշակույթի բովանդակությունը դառնում են խաղերը, ֆոլկլորը, մանկական իրավական կոդեքսը, հումորը, առասպելաբանությունը, ինչպես նաև կրոնական պատկերացումները: Ռ. Մ. Չումիչևայի կարծիքով մանկությունը մի ամբողջ աշխարհ է, որտեղ գործում են նորմերը, կանոնները, օրենքները, արժեքները, որոնք երեխաները ցույց են տալիս մեծերին նշանների, սիմվոլների, բառերի, էմոցիոնալ-խոսքային բացականչությունների, անցյալի և ներկայի հիշողությունների և ապրումների, մտորումների, հույսերի և զգացմունքների միջոցով:

Վ. Վ. Զանկովսկու մանկության հայեցակարգը հրատարակվել է 1954թ.: Հեղինակը մանկության մեջ առանձնացնում է խաղի առանձնահատուկ դերը: Խաղի մեջ երեխան ակտիվ է, երևակայում է, պատկերացնում է, ստեղծագործում է,

մտածում է, ստեղծելով կերպարներ, որոնք դուրս են բերվում գիտակցություն և որոնք ծառայում են որպես հուզական ոլորտի արտահայտման միջոց, իսկ բուն խաղը ծառայում է երեխայի զգացմունքների մարմնական և հոգեկան արտահայտման նպատակներին:

Այսպիսով, մանկության ֆենոմենի և դրա ինքնարժեքության իմաստը կայանում է մեծի կողմից այն փաստի ընկալման մեջ, թե ինչի համար է մարդուն տրված մանկությունը:

Երեխան ապրում է սոցիումում, նրան շրջապատում են բնությունը, մեծերը, առարկաները, նա ինտեգրված է հասարակություն իր մշակույթով, մարդկանց միջև եղած հարաբերություններով, իրավունքներով և ազատություններով: Մակայն նրան բնորոշ է իր սուբմշակույթը՝ արժեքների հավաքածուներ, որոնք բնորոշ են տարբեր տարիքային շրջաններին, հարաբերություններին (շփում, խաղ, աշխատանք, ուսում), որոնցում երեխան գիտակցում, հասկանում և տարբերում է իրեն տարբեր տարիքային խմբերից: Մանկության սուբմշակույթը արտահայտվում է հարցերի, բառաստեղծման, մտորումների, ստեղծագործական գործունեության, մանկական ֆոլկլորի մեջ: Սա սոցիում տնելու միջոց է:

Նախադպրոցական մանկավարժության առջև կանգնած խնդիրները լուծումը իրականացվում է առանձնահատուկ մեթոդների օգնությամբ, որոնք կարելի է բաժանել 2 խմբի՝ 1) հետազոտական մեթոդներ, որոնք թույլ են տալիս ստանալ անհրաժեշտ գիտելիքներ նպատակներ դնելու և խնդիրներ լուծելու համար; 2) դաստիարակության և ուսուցման մեթոդներ, որոնց օգնությամբ մանկավարժը ղեկավարում է մանկավարժական գործընթացը:

Մանկավարժական հետազոտությունների ձևերն են՝ ֆունդամենտալ, կիրառական, պիլոտաժային, պանելային, մոնոգրաֆիկ և այլն:

Հետազոտական մեթոդների օգնությամբ ուսումնասիրվում և ընդհանրացվում են մանկավարժական պրակտիկայի տվյալները: Դրանց թվին են պատկանում՝ զրույցները, անկետավորումը, դիտումները, էքսպերիմենտը, հատուկ զրականության, նախադպրոցականների աշխատանքների վերլուծությունը:

Ուսուցման մեթոդները երեխայի և մանկավարժի նպատակաուղղված փոխկապակցված այն գործունեության եղանակներն են, որի ժամանակ

երեխաները յուրացնում են գիտելիքները, ունակություններն ու հմտությունները, ձևավորվում է նրանց աշխարհայացքը, զարգանում են կարողությունները:

Դաստիարակչական մեթոդները դաստիարակչական խնդիրներին հասնելու առավել ընդհանուր եղանակներն են:

Հետազոտության մեթոդների ընդհանուր դասակարգումը՝ ճանաչման համընդհանուր մեթոդ, համագիտական մեթոդներ, կոնկրետ գիտական մեթոդներ, կազմակերպչական, էմպիրիկ, ինտերպրիտացիոն, դիագնոստիկ, էքսպերիմենտալ:

Հետազոտության տեսական մեթոդներ՝ մանկավարժական, հոգեբանական, փիլիսոփայական, մշակութային գրականության և հատուկ հետազոտությունների տեսական վերլուծություն:

Մանկավարժական հետազոտության էմպիրիկ մեթոդներ՝ դիտում, էքսպերիմենտ (փաստող, ձևավորող, ստուգող); հարցման մեթոդ (անկետավորում, հարցազրույց, զրույց); պրոեկտիվ մեթոդներ, աուդիոդիագնոստիկա:

Գիտամանկավարժական հետազոտությունների պլանավորումը (կուրսային, դիպլոմային աշխատանքի) ընդգրկում է՝ գիտամանկավարժական գրականության վերլուծություն, հետազոտության թեմայի, օբյեկտի և առարկայի որոշումը, հետազոտության նպատակի և խնդիրների առաջադրումը, գիտական հիպոթեզի առաջադրումն ու դրա ստուգումը, հետազոտության փուլերը, էքսպերիմենտի անցկացման կազմակերպումը, հետազոտության արդյունքների վերլուծությունը:

Գիտական աշխատանքի տրամաբանությունը ընդգրկում է՝ ներածության, գլուխների, պարագրաֆների, եզրակացությունների, օգտագործված գրականության, հավելվածի առկայությունը:

Քննության նախապատրաստվելիս անհրաժեշտ է կարողանալ գործարկել առարկայի իմացությունը, վերլուծել երեխաների դաստիարակության կամ ուսուցման վերաբերյալ ԶԼՄ-ների նյութերը, հաստատել առաջադրված դրույթները ապացույցներով, աշխատել բառարաններով, տեղեկագրերով, հանրագիտարաններով, վարել մանկավարժության տերմինաբանական բառարան, կազմել մարդու ինքնակատարելագործման հետ կապված հասկացությունների շարք (ինքնադաստիարակություն, ինքնակրթություն, ինքնապատրաստում, ինքնաստուգում, ինքնավերլուծություն, ինքնաքննադատություն, ինքնակազմակերպում, ինքնահաստատում և այլն):

Ն/դ դաստիարակության զարգացման ժամանակակից տեսությունը

Հիմնական հասկացությունները՝ *գաղափարներ (սկզբնական դրույթներ), օրենքներ և օրինաչափություններ, մանկավարժական տեսություններ, սկզբունքներ, հայեցակարգ:*

Մանկավարժական տեսությունը գիտելիքների համակարգ է, որը նկարագրում և բացատրում է մանկավարժական երևույթների խիստ սահմանված շրջանը: Մանկավարժական տեսության կառուցվածքային տարրերն են՝ գաղափարները, հասկացությունները, օրենքներն ու օրինաչափությունները, սկզբունքները, կանոնները, խորհուրդները: Մանկավարժական տեսությունները բաժանվում են դաստիարակության տեսությունների և ուսուցման տեսությունների: Կենտրոնական խնդիրներից է համարվում նախադպրոցականի դաստիարակության, ուսուցման և զարգացման հարաբերակցության դիտարկումը: 1930-ական թթ. վերջերին ձևավորվեցին այս հարցին նվիրված 3 հիմնական տեսությունները:

Առաջին տեսությունը դիտարկում է երեխայի զարգացումը որպես դաստիարակությունից և ուսուցումից անկախ գործընթաց: Գլխավորը համարվում է երեխայի անկախ զարգացումը, որը կապված չէ մեծի և նրա դերի հետ (Ա. Գեզել, Ջ. Ֆրեյդ, Ժ. Պիաժե):

Երկրորդ տեսությունը կառուցվում է ուսուցման և զարգացման փոխադարձ կապի վրա: Զարգացումը կանխորոշվում է առանձին ներքին գործոններով և դրա հետ մեկտեղ ուսուցմամբ և դաստիարակությամբ: Զարգացումն ու ուսուցումը համագոր են (Տ. Ս. Կոստյուկ, Ն. Ա. Մենշինսկայա):

Երրորդ տեսության համաձայն երեխայի զարգացումը պայմանավորված է նրա ուսուցմամբ և դաստիարակությամբ (Լ. Ս. Վիգոտսկի): Մեծը, հիմնվելով մոտակա զարգացման գոտու վրա, անցնում է առաջ, առաջ ընկնելով երեխայի զարգացումից: Նա իր հետևից տանում է պատմամշակութային առանձնահատկությունների զարգացումը, այնպիսի գործընթացների (ունակություններ և նույնիսկ տաղանդներ), որոնք չեն կարող զարգանալ ուսուցումից դուրս:

Այսպիսով, ուսուցման գործընթացում տեղի է ունենում զարգացում: Այս գաղափարները կոնկրետացվել են Ա. Ն. Լեոնտևի, Դ. Բ. Էլկոնինի, Ա. Վ. Զապորոժեցի աշխատանքներում: Գիտնականների կողմից հիմնավորվել է ուսուցման և զարգացման առաջատար դերի մասին գաղափարը, հայտնաբերվել են զարգացնող ուսուցման հոգեբանա-մանկավարժական պայմանները (Լ. Վ. Զանկով, Դ. Բ. Էլկոնին, Վ. Վ. Դավիդով):

Զարգացնող ուսուցման մանկավարժական տեսությունը ենթադրում է ուսուցման արագ տեմպ, նախադպրոցական կրթության ժամանակակից պրակտիկայում, նոր պայմաններում ուսումնական նյութի անընդհատ կրկնություն (Ա. Պ. Ռուսովա, Ֆ. Ա. Սոխին, Ն. Ն. Պոդոլյակով, Զ. Ի. Միխայլովա և այլոք): Այս տեսության համաձայն մանկական գործունեության մեջ գլխավորը դառնում է երեխայի երևակայությունը և ստեղծագործական ունակությունները: Դրա համար մանկավարժը կիրառում է խաղերը, կոնստրուկտավորումը, ինքնուրույն ստեղծագործումը, մոդելավորումը, փորձարկումները (Ա. Ա. Ագաևա, Օ. Մ. Դյաչենկո, Զ. Ա. Միխայլովա և այլոք): Զարգացնող ուսուցման գաղափարը իրագործվում է նոր ծրագրերում՝ «Ակունքներ», «Մանկություն», «Զարգացում», «Ոսկե բանալի»:

Գիտնականների կողմից նշվում է, որ չպետք է անտեսել մանկական զարգացման *տարիքային շրջանները*: Սակայն նկատվում է երեխայի զարգացման տեմպի արագացում: Կրթական գործընթացը հաճախ գերձանրաբեռնված է լինում տարբեր ծրագրերով: Մանկավարժը պետք է հաշվի առնի երեխայի զարգացման ճանապարհները: *Աքսելերեացիան* զարգացման արհեստական արագացումն է, որը հաճախ հանգեցնում է չափազանց շատ պարզեցմանը և աղքատացմանը: Նման դեպքերում երեխայի զարգացումը նմանվում է գիտելիքների, ունակությունների և հմտությունների կուտակմանը: *Ամպլիֆիկացիան* որպես մանկական զարգացման հարստացում, համարում էր Ա. Վ. Զապորոժեցը, պետք է ընթանա տարիքի առավելագույն ապրելու հաշվին: Զարգացման աղբյուր պետք է դառնան գործունեության առանձնահատուկ մանկական ձևերը, քանի որ դրանցում ձևավորվում են երեխայի բազային *անձնային որակները*՝ ստեղծագործական ակտիվությունը, նախաձեռնողականությունը, կոմպետենտությունը, շրջապատողների հանդեպ վստահությունն ու հարգանքը: Այս դեպքում

գիտելիքները, ունակություններն ու հմտությունները հանդես են գալիս ոչ թե որպես ինքնանպատակ, այլ որպես երեխայի անձի լիարժեք զարգացման միջոց:

Մանկավարժական տեսություններում դաստիարակության դասակարգումը տրվում է ըստ բովանդակության և ընդգրկում է՝ մտավոր, բարոյական, էսթետիկ, աշխատանքային դաստիարակությունը: Ներկայումս դաստիարակության բովանդակությունը ընդլայնվում է սեռական, իրավական, տնտեսագիտական, բնապահպանական, էթնոմշակութային դաստիարակության հաշվին:

Մանկավարժական տեսությունները համադրվում են անձի զարգացման տեսությունների հետ: Թվարկենք դրանցից մի քանիսը:

Կոգնիտիվ տեսություններում (Ժ. Պիաժե) առաջին պլան են մղվում մտքի, ինտելեկտի, ճանաչողական ոլորտի զարգացումը: Բարոյական առումով հաշվի են առնվում երեխայի «բարոյականության ավտոնոմությունը», մեծի դիրքորոշում անցնելու նրա կողմնորոշումը (Էգոցենտրիզմը):

Հոգեբանավերլուծաբանական տեսությունը դիտարկում է պահանջմունքամոտիվացիոն ոլորտի զարգացումը և սեռադերային վարքի ձևավորումը (Ջ. Ֆրեյդ, Է. Ֆրոմմ, Է. Բեռն, Է. Էրիքսոն):

Գիտնականները բարձրացնում են գենդերային դաստիարակության և հոգեբանասոցիալական զարգացման հարցը:

Կապվածության տեսության մեջ կենտրոնական տեղ զբաղեցնում են երեխայի փոխհարաբերությունները հարազատների հետ (Ջ. Բոուլբի):

Բիխեվիորիստիկ տեսությունը դիտարկում է անձի զարգացումը նրան վարքի եղանակներ սովորեցնելու միջոցով: Մարդը սովորում է ամբողջ կյանքի ընթացքում, նա այնպիսին է, ինչպիսին սովորել է լինել (Ջ. Ուոտսոն): Սովորեցումն իրականացվում է նմանակելու ճանապարհով: Տեսության մեջ տեղի է ունենում մարդու գիտակցության, կամքի, սեփական ակտիվության վերագնահատում:

Հումանիստական տեսությունը ենթադրում է անձնային աճ, ինքնազարգացում, ինքնաակտիվացում, ինքնաիրագործում (Շ. Բյուլեր, Ա. Մասլոու, Կ. Ռոջերս):

Գործնական մոտեցման տեսությունը ենթադրում է անձի զարգացումը (Լ. Ս. Վիգոտսկի, Դ. Բ. Էլկոնին, Ա. Ն. Լեոնտև): Մեր երկրում և արտերկրում լայնորեն հայտնի է երեխայի կյանքի նախադպրոցական շրջանի ինքնարժեքության մասին Ա.

Վ. Զապորոժեցի տեսությունը: Այս տեսության համաձայն նախադպրոցական մանկության շրջանում երեխայի զարգացման հիմնական ճանապարհը զարգացման ամպլիֆիկացիան է, այսինքն հարստացումը, լրացումը երեխայի համար առավել կարևոր, գործունեության առանձնահատուկ մանկական նախադպրոցական ձևերով, տեսակներով և եղանակներով: Երեխային մոտ են խաղը, շփումը մեծերի և հասակակիցների հետ, փորձարկումները, առարկայական, պատկերավոր, խոսքային, գեղարվեստաթատերական գործունեությունները, մանկական աշխատանքը և ինքնասպասարկումը:

Ժամանակակից մանկավարժական տեսությունները իրագործում են ինտեգրման սկզբունքը, որն այսօր գտնվում է գիտական հիմնավորման և փորձարկման փուլում: Օրինակ կարող է ծառայել «Մանկություն» ծրագիրը, որում հստակ կերպով հանդես է գալիս թեմատիկան, օրինակ, «Մենք մանկապարտեզում և տանը» թեման: Ինտեգրման սկզբունքը առավել հստակ դիտարկվում է ուսուցման միջոցների կիրառման, գործունեության տարբեր տեսակների մեջ՝ «խաղ-պարապմունք», «խաղ-աշխատանք», «խաղ-կոնստրուկտավորում»:

Հայրենական մանկավարժական տեսությունները հարստանում են նախադպրոցականի անձի ձևավորման գործում տնտեսության դերի ուսումնասիրման հաշվին: Այսօր տնտեսագիտական կրթությունն ու դաստիարակությունը ուսումնասիրվում են որպես առանձին խնդիր (Ա. Դ. Շատովա, Ա. Ա. Սմոլենցովա):

Գոյություն ունեն տնտեսագիտության վերաբերյալ հեղինակային ծրագրեր՝ «Նախադպրոցականը և ... տնտեսագիտությունը», «Գնում-էկոնոմի դասեր»: Այս ծրագրի բովանդակության մեջ նախադպրոցականների տարրական տնտեսագիտական կրթությունը հանդես է գալիս տնտեսագիտական գիտելիքների՝ (աշխատանքը որպես տնտեսագիտական կատեգորիա, փողը որպես սոցիոմշակութային երևույթ, գովազդ), տնտեսագիտական գործունեության բազային որակների (աշխատասիրություն, գործարարություն, տնտեսունակություն), տնտեսագիտական մտածողության և արժեքային կողմնորոշումների կայացման տեսքով:

Որոշումներ են իրականացվում իրավական դաստիարակության տեսության և պրակտիկայի մեջ (Տ. Ն. Դորոնովա, Ա. Ա. Կոզլովա, Ն. Յու Գան): Տեսության մեջ

զլիսավորը հանդիսանում է երեխայի որպես անհատի ազատության հարգանքը: Բարոյա-իրավական դաստիարակությունը կապված է ինքնագնահատականի, ինքնավստահության, վարքի բարոյական շարժառիթների և ընկերական փոխհարաբերությունների զարգացման հետ: Նախադպրոցականների իրավական դաստիարակության պայմաններն են՝ ծանոթություն իրավական նորմերի և կանոնների հետ (էթիկ զրույցներ, երեխաների արարքների վիդեոնկարահանումներ, պրոբլեմային իրավիճակներ), ծանոթություն սեփական իրավունքների հետ՝ հանգստի, կրթության, անվան, սիրո (գեղարվեստական գրականության ընթերցանություն, էթիկ զրույցներ), մանկավարժի պատմությունները երեխայի իրավունքների մասին Կոնվենցիայի վերաբերյալ: Այսպիսով, իրավական դաստիարակությունն ընդգրկում է՝ տեղեկատվական-ճանաչողական, էմոցիոնալ-գնահատող և վարքային բաղադրիչները:

Հայրենասիրական և քաղաքացիական դաստիարակության մանկավարժական տեսությունը կառուցվում է ժողովրդականության սկզբունքի (Կ. Դ. Ուշինսկի, Լ. Ն. Տոլստոյ), Ռ. Ի. Ժուկովսկու, Ն. Ֆ. Վինոգրադովի, Ս. Ա. Կոզլովայի, Մ. Ի. Բոգոմոլովայի, Ժ. Կ. Սուսլովայի հետազոտությունների վրա: Հայրենասիրական դաստիարակության անհրաժեշտությունն արտացոլվում է «Ակունքներ», «Մանկություն», «Մանկությունից պատանեկություն» ծրագրերում, «Ժառանգություն», «Ես մարդ եմ» լրկալ ծրագրերում: Ծրագրերում հայրենասիրությունը ընկալվում է որպես Հայրենիքի և Երկրի նկատմամբ սիրո զգացողություն:

Հայրենասիրական դաստիարակության փուլերն են՝ 1) *նախնական* (բարոյական պատկերացումների, զգացմունքների, վարքի փորձի ձևավորում), 2) *գեղարվեստական-ծանոթացնող* (ծանոթություն ազգային ավանդույթների, ազգային արվեստի հետ), 3) *կոգնիտիվ-հուզական* (սեփական երկրի, փոքր հայրենիքի, այլ երկրների ազգերի հանդեպ հետաքրքրության զարգացում), 4) *հուզա-գործնական* (գործունեության տարբեր ձևերում սեփական գիտելիքները իրագործելու ցանկության և ունակության ձևավորում):

Հայրենասիրական դաստիարակության *միջոցներն են՝* գեղարվեստական գրականությունը, արվեստը, ավանդույթները, ֆոլկլորը, պրակտիկ գործունեությունը: *Մեթոդներն են՝* էքսկուրսիաները, խաղ-ճանապարհորդությունները,

թանգարանների, մանկական նկարների ցուցահանդեսների ստեղծումը: Նախադպրոցական կրթության մանկավարժական համակարգը հարստացնում են նաև արտասահմանյան մանկավարժական տեսությունները՝ մանկապարտեզի մակարդակում լրագրության գաղափարը, գեղարվեստա-բովանդակային զարգացնող միջավայրի վերակառուցման գաղափարը (Բտալիա); սեփական արարքների և գործունեության համար անձնական պատասխանատվության դաստիարակման գաղափարը (ԱՄՆ):

Նախադպրոցական մանկավարժական գիտությունը գտնվում է մշտական զարգացման և հարստացման մեջ, այն արդիականանում է հաշվի առնելով նախադպրոցական կրթական հաստատությունների մանկավարժների աշխատանքի կուտակած դրական փորձը:

**ՄԱՆԿԱՎԱՐԺ-ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ և
ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Մանկավարժի գործունեությունն ուղղված է անձնավորության ձևավորմանը և զարգացմանը: Մանկավարժի գերխնդիրն ու առաքելությունը մարդկային էության բացահայտումն է, հոգու կառուցումը: Հասարակության կողմից կրթական համակարգին ներկայացվող պետական պատվերը՝ ֆիզիկապես և հոգեբանորեն առողջ սերնդի ձևավորումն է, որի իրականացնողը մանկավարժն է: Մանկավարժը անմիջականորեն չի մասնակցում հասարակական արդյունաբերության գործընթացին, սակայն ձևավորում է մարդ, որը հասարակության նյութական և հոգևոր բարիքների ստեղծողն է, ազգի և պետության հիմնարար արժեքների կրողը և հասարակության ամենաթանկ հարստությունը: Երկրի բարեկեցությունը, մարդկության առաջընթացը մեծապես կախված է աճող սերնդի ստեղծագործական և հոգևոր ներուժից:

Այսպիսով, մանկավարժի առաջնային սոցիալական գործառույթը մարդկային ներուժի, նրա ոգեղենության վերարտադրումն է: Պահպանելով և փոխանցելով համամարդկային արժեքներ, հաղորդակից դարձնելով Երեխային արժեքային համակարգին, մանկավարժը սերմանում է կատարյալ մարդկային էության ձգտելու ցանկություն, զարգացնում է հոգևոր արժեքներ կրողի զգացողություն, նպաստում հասարակության արժանապատիվ անդամ լինելու ձգտմանը:

Անձնավորության կայացման գործընթացը ենթադրում է վաղվա հասարակության քաղաքացու ձևավորում, ինչը պահանջում է լուրջ մանկավարժական կանխատեսումներ: մանկավարժն աշխատում է, «ներկայում», սակայն կառուցում է «ապագան»: Մանկավարժի կարևորագույն սոցիալական գործառույթներից է ապագա քաղաքացու գերակա արժեքների նախագծումը և դրանց փոխանցման ուղիների մշակումը:

Անձնավորության ձևավորումն ընթանում է որոշակի պատմական ժամանակահատվածում և կոնկրետ սոցիալ-մշակութային միջավայրում: Երեխան հարմարվում է սոցիալական միջավայրին մեծահասակների օգնությամբ, որոնք

սովորաբար փորձում են մատուցել երեխային «արջի ծառայություն», մատնացույց անելով հասարակական գոյատևման ընդունված ավանդական եղանակները: Իրականում, մանկավարժի գործունեության իմաստն ավելի բարդ է և պատասխանատու, քան թվում է առաջին հայացքից: Այն ուղղված է ինքնուրույն մտածելակերպի և կյանքի դիրքորոշման ձևավորմանը, ինչը հնարավորություն է տալիս ազատ կողմնորոշվելու և գիտակցաբար ընտրելու հասարակության հետ հարաբերվելու եղանակները: Մանկավարժի սոցիալական գործառույթներից է օգնել երեխային հարմարվել տվյալ հասարակության սոցիալ-մշակութային միջավայրին, սովորեցնել հաղթահարել զարգացող, հետևաբար մշտապես փոփոխվող հասարակության կողմից ներկայացվող դժվարությունները, նպաստել տվյալ հասարակության հետ ներդաշնակ համակեցությանը:

Մանկավարժի գործունեությունն ինքնին մարդասիրական է, այն ակամայից գտում է հասարակության պոզիտիվ կողմերը, բացահայտում զարգացման հեռանկարները և փորձում հասարակական փորձն աճող սերնդին փոխանցել վերլուծաբար՝ ընդգծված դրական շեշտադրումներով: Հասարակության նեգատիվ երևույթները, պարզապես, մատնանշվում են և շրջանցվում: Հասարակական կյանքի այժմյա հումանիզացման և ժողովրդա- վարացման միտումները փոխանցելի են առաջին հերթին մանկավարժական գործունեության միջոցով, որին ներկայացվող մանկավարժական պահանջները գնալով բարդանում են: Մանկավարժի սոցիալական գործառույթներից է ժամանակակից հասարակության պահանջներին համապատասխանող մանկավարժական գործունեության ծավալումը:

Վերջապես, մանկավարժը կատարում է ևս մեկ կարևորագույն գործառույթ, նրան է վստահված աճող սերնդի զարգացման աստիճանի գնահատման և վերահսկման պատասխանատու գործը: Պատասխանատու լինելով ողջ հասարակության առջև, մանկավարժն հաշվետու է նախ ինքն իր առջև, նա անընդհատ շտկման և վերակառուցման է ենթարկում իր կողմից կազմակերպվող մանկավարժական գործունեությունը:

Այսպիսով, մանկավարժն իր բոլոր սոցիալական գործառույթներն իրագործում է մանկավարժական գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով: Մանկավարժական գործունեությունը մանկավարժի մասնագիտական գործիքն է:

Խաղը որպես գործունեության առաջատար ձև նախադպրոցական տարիքում: Խաղային տեխնոլոգիա

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է, այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ողջ կյանքի ընթացքում: Խաղի հիմնադիրը մշտապես հետաքրքրել է ոչ միայն հոգեբաններին և մանկավարժներին, այլև փիլիսոփաներին, հասարակագետներին, ազգագրագետներին, կենսաբաններին և հոգեթերապևտներին: Քննարկելով խաղային գործունեությունը տարբեր տեսանկյուններից գիտնականները միահամուռ նշում են, որ խաղը մարդկային մշակույթի համակարգի ուրույն և անբաժանելի մասն է:

Խաղային գործունեության բացառիկ մանկավարժական նշանակությունը նախադպրոցահասակ երեխաների կյանքում կարևորել են անցյալի ականավոր մանկավարժներ՝ Յ. Ա. Կոմենսկի, Ժ. Ժ. Ռուսոն, Ֆ. Ֆրյոբելը, Կ. Դ. Ուշինսկին, Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը, Առ. Բահաթրյանը, Ս. Արդուրյանը, Ս. Բաբայանը և այլոք: Խ. Աբովյանը հորդորում էր մանկավարժներին «չգրկել երեխային անմեղ խաղերից»: Իր «Պարապ վախտի խաղալիք» աշխատության մեջ նա կարևորում է երեխաներին ուրախություն և հաճույք պատճառելու գործում հետաքրքիր զրույցների և մանկան խաղերի դերը: Մեծն Հ. Թումանյանը գտնում էր, որ **խաղը երեխայի «բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունը, նրա էությունը»**: Հավաքելով և մշակելով ժողովրդական բանահյուսության հոգևոր գանձերը Հ. Թումանյանը մշակում է երեխաների համար հայրենագիտական խաղեր և վերլուծում նրանց մանկավարժական արժեքը երեխայի միտքը և բարոյականությունը զարգացնելու գործընթացում: Հ. Թումանյանի կողմից մշակած խաղերի մեծ մասը տարբերակված ձևով առ այսօր օգտագործվում է նախադպրոցական դիդակտիկայում: Դրանցից են. «Գույների խաղը», «Աստղերի խաղը», «Տառերի խաղը», «Հայկական առածների լոտո» և այլ օրինակներ: Խաղի էությանն ու յուրահատկություններին անդրադարձել է հայ մանկավարժական մտքի խոշոր ներկայացուցիչ՝ Ղ. Աղայանը: Նա գտնում էր, որ երեխաներին հրապուրում է շրջապատողների գործունեությունը, և նրանք ցանկանում են վերարտադրել այդ իրենց խաղերում՝ ընդօրինակելով մեծահասակներին: Ղ. Աղայանը նկարագրում է տարբեր միջավայրերում ապրող երեխաների խաղերը և գալիս եզրակացության, որ դրանք արտացոլում են իրական կյանքը: Ղ. Աղայանը կյանքի է կոչում նախադպրոցականի դաստիարակության «լավ երգի և խաղի» սկզբունքը: Հետաքրքիր են և չափազանց արժեքավոր նախադպրոցական դաստիարակության վառ ներկայացուցիչ, Թիֆլիսի ֆրյոբելյան մանկապարտեզի տնօրեն՝ Սոֆյա Բաբայանի մանկավարժական մոտեցումները: Նա իր բազմաթիվ հոդվածներում առանձնահատուկ կարևորում է խաղի դերը երեխայի զարգացման գործում և տալիս գործնական խորհուրդներ մանկավարժներին և

ծնողներին երեխաների խաղը ճիշտ կազմակերպելու և ղեկավարելու համար: Ս. Բաբայանը գտնում էր, որ խաղը պահանջում է ամենայն ուշադրություն, լուրջ և նրբանկատ վերաբերմունք: Խաղի հետաքրքիր վերլուծություն է անում հայ մանկավարժ-հոգեբան Առ. Բահաթրյանը, նշելով, որ ոչինչ չի կարող զարգանալ առանց գործողության, իսկ խաղը՝ երեխայի լավագույն գործողությունն է: Այն երեխաները, որոնք չեն խաղում, ըստ Առ. Բահաթրյանի, նման են, պարզապես, «ծերացած մանուկների»:

Խաղի դերն ու նշանակությունը նախադպրոցականի կյանքում մանրամասն ուսումնասիրվել ու քննարկվել է խորհրդային մանկավարժության ու հոգեբանության ականավոր գիտնականներ՝ Լ. Ս. Վիգոտսկու, Ս. Լ. Ռուբինշտեյնի, Ա. Ն. Լեոնտյևի, Գ. Բ. Էլկոնինի, Լ. Ա. Վենգերի, Գ. Բ. Մենջերիցկայայի, Ռ. Ի. Ժուկովսկայայի, Ա. Պ. Ուսովայի և ուրիշների կողմից: Նրանք խաղը դիտում են որպես երեխայի համակողմանի զարգացման ինքնահաստատման և ինքնակատարելագործման կարևորագույն միջոց: Նշում են խաղային գործունեության պատմական ծագումն ու սոցիալական բնույթը:

Խաղի ժամանակակից տեսությունը կառուցվում է խորհրդային հոգեբանամանկավարժության տեսական դրույթների հիման վրա, որոնք լրամշակվում են մանկավարժական նորագույն մոտեցումներով: Համաձայն նախադպրոցական դաստիարակության հայեցակարգի, խաղն իրենից ներկայացնում է ինքնարժեք գործունեություն, որը շնորհում է նախադպրոցահասակ երեխային ներքին ազատություն և ինքնուրույնության զգացողություն, ցանկալին իրողություն դարձնելու վստահություն, իրականության իր տեսանկյունից նշանակալի կողմերը կրկին վերապրելու, հաճույք և բավարարվածություն զգալու լայն հնարավորություններ: Խաղային գործունեության ընթացքում երեխայի համար ստեղծվում են լավագույն պայմաններ (ազատ և բնական միջավայր, հուզական ներդաշնակություն, հավասարության մթնոլորտ)՝ հասակակիցների միջավայրում «այստեղ և անհապաղ» ինքնահաստատվելու համար: **«Այստեղ և անհապաղ» ինքնահաստատվելու հնարավորությունը երեխայի խաղային գործունեության հիմնական դրոյթատճառն է**, հետևաբար և երեխաների խաղային գործունեության կազմակերպման և կառուցման գլխավոր սկզբունքը: Յուրաքանչյուր խաղացող երեխա առաջին հերթին ջանում է ինքնահաստատվել հասակակիցների միջավայրում, և խաղի առավելությունը, մանկան գործունեության այլ ձևերի համեմատությամբ այն է, որ խաղում կան ինքնահաստատվելու բոլոր հնարավորությունները: Խաղային գործունեության նշված բնութագիրը խոսում է այն մասին, որ այն իրենից ներկայացնում է ներքին պահանջմունքներով պայմանավորված գործունեություն, որն ունի յուրաքանչյուր երեխայի համար սուբյեկտիվ՝ ներանձնային նշանակություն և արժեք: **Խաղն, իսկապես, ինքնարժեք գործունեություն է և բացարձակ անփոխարինելի է նախադպրոցականի կյանքում:** Որևէ այլ գործունեություն չունի խաղային գործունեության նշված առավելությունները: Այսպիսով, խաղային գործունեությունը նախադպրոցականի

անձնավորության կայացման ներքին գործոն է, որը չի կարող ամբողջապես բացատրվել և ընդհանրացվել, այն բավական սուբյեկտիվ է: Միննույն ժամանակ, խաղային գործունեությանը բնորոշ է օբյեկտիվ մանկավարժական նշանակություն: Խաղն ուղղված է նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր զարգացմանը, օրինաչափորեն նպաստում է նրանց հոգեկանի զարգացմանը, հուզազգացմունքային ոլորտի հարստացմանը, հասակակիցների հետ փոխհարաբերությունների հաստատմանը, սեփական սոցիալական փորձի ձեռքբերմանը: Խաղը նախադպրոցականի զարգացման և դաստիարակության արդյունավետ միջոց է և նրա հետագա զարգացման հիմնական գրավականը: Միավորելով խաղային գործունեության սուբյեկտիվ արժեքը և զարգացնող օբյեկտիվ նշանակությունը, կարելի է եզրակացնել, որ խաղը նախադպրոցական տարիքի երեխաների կյանքի և գործունեության կազմակերպման ամենահարմար ձևն է: Համոզվելով համար նշվածում, փորձենք մանրամասն քննարկել **խաղային գործունեության հիմնական առանձնահատկությունները:**

1. Խաղային գործունեության ընթացքում բավարարվում է նախադպրոցականի հիմնական պահանջմունքները՝ ակտիվության և ինքնուրույնության, հաղորդակցման և մեծահասակների կյանքին անմիջականորեն հաղորդակից լինելու, արտաքին աշխարհը ճանաչելու և այն արտացոլելու: Ինչպես նշում էր Կ. Դ. Ուշինսկին, երեխան խաղի ընթացքում փորձարկում է իր ապագա կյանքը և «փորձում սեփական ուժերը»:

2. Խաղային գործունեության ընթացքում բնականոն ճանապարհով զարգանում են երեխայի հոգեկան գործընթացները, ձևավորվում են նորագոյացություններ, որոնք նախապատրաստում և ապահովում են երեխայի հոգեկանի զարգացման հաջորդ փուլը: Հետաքրքիր են նախադպրոցականի երևակայության զարգացման յուրահատկությունները, որոնք լավագույնս դրսևորվում են խաղի ընթացքում: Որևէ այլ գործունեության ընթացքում երեխան չի գործում «երևակայան իրադրության» պայմաններում և չի օգտագործում փոխարինող առարկաներ:

3. Խաղային գործունեությունը նպաստում է գործունեության նոր ձևերի՝ աշխատանքի և ուսումնական գործունեության, առանձնացմանը: Երեխայի խաղն իր զարգացման ընթացքում ձեռք է բերում աշխատանքային և ուսումնական գործունեությանը բնորոշ կառուցվածքային տարրեր՝ նպատակ, պլանավորում, արդյունք, որոնք, ձևավորվելով խաղային գործունեության ընթացքում, տեղափոխվում են գործունեության այլ ձևեր:

4. Խաղային գործունեությունը բնական գործունեություն է, ուր չկա ճնշում և հարկադրանք, առկա է երեխաների համար բնական միջավայր: Խաղի ընթացքում երեխաներն ազատ են և ինքնություն, ունեն հավասար իրավունքներ և ինքնադրսևորման լայն հնարավորություններ: Խաղն ապահովում է հուզականությամբ հագեցած հաճելի մթնոլորտ և համագործակցելու լավագույն պայմաններ:

5. Խաղը ստեղծագործական գործունեություն է, քանի որ այն նպաստում է

յուրաքանչյուր խաղացող երեխայի անհատական առանձնահատկությունների բացահայտմանը և կրեատիվ (ստեղծագործական) ընդունակությունների զարգացմանը: Խաղի ընթացքում են լավագույնս դրսևորվում, հետևաբար և ախտորոշվում երեխայի ժառանգական նախադրյալները, հակումներն ու հետաքրքրությունները: Խաղի ընթացքում երեխան փորձում է ինքնահաստատվել և բնականաբար ջանում է առավելագույնս դրսևորել իր հակումներն ու կարողությունները: Խաղը նաև երեխայի ընդունակությունների և կարողությունների ախտորոշման արդյունավետ միջոց է:

6. Խաղը աշխարհանաչման և աշխարհի արտացոլման եղանակ է, իմացական գործունեություն: Խաղային գործունեության ընթացքում ձեռքբերած գիտելիքները կրկնակի արժեքավոր են՝ դրանք և տեղեկատվական են և գործնական բնույթի: Գիտելիքի՝ խաղում անմիջապես կիրառվելու կամ փորձարկելու հնարավորություն, նպաստում է դրա յուրացմանը և ամրապնդմանը, խաղի ընթացքում ձեռքբերած գիտելիքները չափազանց կայուն են:

7. Խաղային գործունեությունն իր բնույթով ուղղված է նախադպրոցականի հուզականային ոլորտի զարգացմանը, հետևաբար և հիմնարար անձնային որակների ձևավորմանը: Նախադպրոցականի անձնավորության ձևավորման գործընթացը պայմանավորված է նրա հուզական և կամային ոլորտների ներդաշնակ զարգացմամբ, ինչը լավագույնս ապահովվում է խաղային գործունեության ընթացքում:

Ամփոփելով խաղային գործունեության առանձնահատկությունները, միևնույն ժամանակ նրա առավելությունները մանկան գործունեության այլ ձևերի նկատմամբ, կարելի է համարձակորեն արձանագրել, որ խաղը, հանդես գալով որպես նախադպրոցական տարիքի երեխաների առաջատար գործունեություն, նախադպրոցահասակ երեխաների զարգացման և դաստիարակության լավագույն միջոցն է, նրանց կյանքի և գործունեության կազմակերպման հիմանական ձևը:

Խաղի վերաբերյալ հոգեբանամանկավարժական գրականության մեջ գոյություն ունեն նաև այլընտրանքային մոտեցումներ, որոնց բազմակողմանի քննարկումը, կարծում ենք, կօգնի խաղը դիտարկելու տարբեր տեսանկյուններից և ավելի լավ պատկերացնելու խաղային գործունեության բուն էությունը:

**Հեքիաթների ազդեցությունը նախադպրոցականի հոգեկան
զարգացման գործընթացում**

Բոլոր երեխաներն, առանց բացառության սիրում են հեքիաթներ: Երեխաների հետ աշխատանքում չափազանց կարևոր է գտնել նրանց հետ խոսելու ճիշտ լեզուն: Եվ հեքիաթները այդ հաղորդակցման ժամանակ ամենաարդյունավետ միջոցներն են, «ամնահասանելի լեզուն»: Հեքիաթով է սկսվում երեխայի ծանոթությունը արտաքին աշխարհի հետ: Ցանկացած հեքիաթ պատմություն է մարդկանց փոխհարաբերությունների, մեր կյանքում գործող օրենքների մասին: Եվ միաժամանակ դրանք բոլորը ներկայացվում են երեխայի համար հասկանալի լեզվով: Հեքիաթի շնորհիվ զարգանում է երեխայի երևակայությունը և ստեղծագործելու ունակությունը:

Լավ հեքիաթը կյանքի ծնունդ է՝ խաղ, արկած, հրաշք, ճակատագիր... հեքիաթի թեմաները անվերջ են:

Լսելով հեքիաթը՝ երեխան ակամա այնտեղ գտնում է իր կյանքին համապատասխան իրավիճակներ, փորձում է իրեն նույնացնել համարձակ և քաջարի հերոսների հետ: Երբեմն մեծահասակները, ցանկանալով երեխայի հետ խոսել իրենց դժվարությունների մասին կամ ինչ-որ բան հուշել, դժվարանում են համապատասխան բառեր գտնել: Վախենում են, որ երեխան ճիշտ չի հասկանա իրենց: Այդ իրավիճակից ելք կա, հարկավոր է, որ մեծահասակը երեխայի հետ ընկղմվի երևակայության և կախարդանքի աշխարհը, իսկ գործնական ամենալավ օգնականը հեքիաթային պատմություններն են:

Սակայն՝

Եկեք հենց սկզբից պայմանավորվենք՝ սովորական հեքիաթ պատմելը մի բան է, հեքիաթաթերապիան՝ այլ բան: Այն հեքիաթները, որոնք գործածվում են հեքիաթաթերապիայի դեպքում, խորթ են անտեղյակ ականջին: Գրական հեքիաթները հեքիաթաթերապիայի մեջ կարող են օգտագործվել որպես կանխարգելում. մոդել, հարաբերությունների զարգացման միջոց, բայց չեն կարող հիմնական նյութ լինել: Այսպես կոչված սովորական կամ գրական հեքիաթները հաճախ հոգեբանական հեքիաթների հետ նույն գրքում են տպվում, նախ այն պատճառով, որ դեռ հնուց փորձում են հոգեբանությունն ու գրականությունը համատեղել՝ ոչ թե դատողությունների մակարդակով, այլ որպես պատրաստի նյութ: Բավականին նյութ ու մեթոդներ են հավաքված, որոնք կարող են գործածվել հոգեբանական տարբեր խնդիրներ լուծելիս:...

Ես կարծում եմ, որ հեքիաթը կարող է օգտագործվել որպես պացիենտի, հատկապես երեխայի, կոնկրետ պրոբլեմի լուծման միջոց: Բայց դա հեքիաթի հնարավոր օգտագործման մի եղանակ է:

Ռուս հայտնի հոգեբան-հեքիաթագիր

Յուրի Սոկոլով

Առաջին և ամենապարզ ձևը հոգեբանական հեքիաթներն ուղղակի ընթերցելն է: Կարդալիս հարկավոր է հետևել, թե ինչպես է երեխան լսում, ինչպես է արձագանքում: Կարող եք նաև հարցեր տալ նրան: Նա ազատորեն պետք է

արտահայտի իր կարծիքը, քննադատի, փոփոխի ըստ ցանկության, բայց եթե չի ցանկանում խոսել, նրան ստիպել հարկավոր չէ: Քննարկումից հետո կարելի է խնդրել, որ երեխան նկարի հեքիաթը: Դա հանգստացնում և լիցքաթափում է երեխային: Կարող եք նաև հեքիաթը բեմականացնել:

Այս խորագրում պարբերաբար կհայտնվեն հոգեբանական հեքիաթներ, որոնք կարող եք օգտագործել Ձեր երեխայի հետ աշխատելիս:

Հեքիաթի օգնությամբ ընթերցողը կամ լսողը հանդիպում է ինքն իրեն, բացահայտում է իր գաղտնի, դեռ չբացահայտված կողմերը: Մասնագետները հեքիաթի միջոցով կարող են բացահայտել լուրջ խնդիրներ: Բոլոր երեխաներն էլ ունեն իրենց սիրելի հեքիաթները և այդ ընտրությունը հենց այնպես չէ: Երեխան սիրում է այն հեքիաթը, որում հեքիաթի հերոսը վարվում է այնպես, ինչպես ինքը կվարվեր: Ծնողը, պարզելով երեխայի սիրելի հեքիաթը, կարող է ավելի ճիշտ հասկանալ իր երեխային:

Հեքիաթի ազդեցության տակ դուրս են գալիս անհատի պոռթկումները, արտահայտումները այնքան ճիշտ են լինում, որ ինչ իրեն խանգարում է, չի թողնում հանգիստ ապրի, դուրս է բերում: «Հեքիաթի ընտրությունը կապված է դիմացինից, դիմացինն է թելադրում, թե ինչպիսի հեքիաթ ընտրվի: Երբեմն հեքիաթի ընթացքը կարելի է փոխել՝

Որպես ստուգիչ թեստ շատ արդյունավետ մեթոդ է հեքիաթը թողնել անավարտ, որպեսզի երեխան ինքը շարունակի: «Եթե երեխան իր ստեղծած հեքիաթը ավարտում է բացասական, դա նշանակում է, որ ինքը դեռ խնդիր ունի, հեքիաթաթերապևտը պետք է շարունակի այնքան մինչև հեքիաթի վերջաբանը լինի դրական: Նմանատիպ թերապիաները շաբաթը մեկ անգամից ավել շատ է, քանի որ երեխան պետք է կարողանա մարսի այդ ամենը, մտածելու ժամանակ ունենա, եզրահանգի ինչ-որ բանի:

Հեքիաթաթերապիան շատ կարևոր նշանակություն ունի երեխայի հետ աշխատելիս, քանի որ այն օգնում է.

- երեխայի դաստիարակության, զարգացման, կրթության հարցերում,
- երեխայի ինքնաճանաչման հարցերում,
- շրջակա աշխարհի հետ փոխըմբռնման հարցերում,
- մտածողության, հիշողության, երևակայության զարգացման հարցերում,
- երեխայի սոցիալ - հուզական վարքի շտկման հարցերում:

Թերապևտիկ հեքիաթների տեսակները

Գեղարվեստական հեքիաթներ

Ժողովրդական հեքիաթները կազմվել են դարերի ընթացքում, պահպանել բարոյա-էսթետիկ սկզբունքները, մարդկանց միջև ունեցած փոխհարաբերությունները, այդ իսկ պատճառով էլ միշտ կիրառվել են մանկավարժական նպատակներով:

Դիդակտիկ հեքիաթներ

Ուսուցողական հեքիաթները երեխաներին պատմում են նոր հասկացությունների մասին, հիմք են հանդիսանում նոր գիտելիքների ձեռք բերման համար: Այս հեքիաթներում շնչավորվում են թվերը, տառերը, առարկաները և այլն:

Դիագնոստիկ հեքիաթներ

Դուք հավանաբար գիտեք՝ ինչ հեքիաթներ են դուր գալիս Ձեր երեխային: Դա նշանակում է, որ նա ենթագիտակցաբար արդեն ընտրել է հեքիաթի իր սիրելի հերոսին և փորձում է նմանակել նրան: Փորձեք հեքիաթ հորինել Ձեր երեխայի հետ միասին, և Դուք կբացահայտեք նրա գաղտնի մտքերն ու ցանկությունները:

Պրոֆիլակտիկ հեքիաթներ

Հեքիաթներ լսելու ընթացքում երեխաներն ակամայից գիտելիքներ են կուտակում իրենց և շրջակա միջավայրի մասին, ձևավորվում է երեխայի անձը, դրվում է նրա հետագա կյանքի հիմքը:

Բուժիչ - հոգեբանական հեքիաթներ

Հեքիաթ լսելով՝ երեխան իրեն նույնականացնում է իր կյանքի իրավիճակը հիշեցող հերոսի հետ, վերապրում է նրա տխրությունն ու ուրախությունը: Նրա հետ միասին հայտնվում է խնդիրների մեջ և դրանցից ելքեր փնտրում: Դրա շնորհիվ իրական կյանքում նա սկսում է իրեն զգալ ավելի պաշտպանված և ինքնավստահ՝ օգտագործելով դրական հերոսի կիրառած հնարքները իր խնդիրները կարգավորելու հարցում:

Մեղիտաստիվ հեքիաթներ

Մեղիտաստիվ հեքիաթներն ուղղված են որոշակի դրական հուզական վիճակի առաջացմանը: Դրանք երեխային օգնում են ազատվել լարվածությունից, հոգնածությունից և գրգռվածությունից:

Առանձնացնենք հեքիաթների մի քանի խմբեր՝

Հեքիաթներ կենդանիների մասին

Երեխաներին ավելի մոտ և հասկանալի են կենդանիների մասին հեքիաթները: Այդ տարիքում երեխաները հաճախ իդենտիֆիկացնում են իրենց կենդանիների հետ, հեշտությամբ կերպարանափոխվում են, կրկնօրինակում կենդանու վարքը: Այդ պատճառով կենդանիների մասին հեքիաթները ավելի լավ կարող են օգնել փոքրիկներին՝ կյանքի փորձը փոխանցելու համար:

Կախարդական հեքիաթներ

Սկսած հինգ տարեկանից երեխան իրեն իդենտիֆիկացնում է մարդկային կերպարների՝ արքայազների, թագուհիների, հրաշագործների, զինվորների և այլոց հետ: Նա սկսում է ընդօրինակել վարքային տարբեր մոդելներ:

Սարսափ հեքիաթներ

Հեքիաթներ՝ չար ուժերի, կախարդների, գերբնական ուժերի մասին: Որպես կանոն, վեց տարեկանից սկսած երեխաները սկսում են միմյանց պատմել հեքիաթ-սարսափներ: Հեքիաթ-սարսափների և չար ոգու մասին պատմությունների միջոցով երեխաները մասամբ վերապրում են իրենց վախերը:

Կենցաղային հեքիաթներ

Այստեղ հաճախ պատմվում է ընտանեկան դժվարությունների, կոնֆլիկտային իրավիճակների լուծման ձևեր: Այդ իսկ պատճառով, դրանք անփոխարինելի դեր են խաղում ընտանեկան խորհրդատվության և այն դեռահասների հետ աշխատանքում, որոնք խնդիրներ ունեն ընտանեկան փոխհարաբերություններում:

Դիդարկտիկ հեքիաթներ

Դիդարկտիկ հեքիաթները կարող են բացահայտել որոշակի գիտելիքների կարևորությունը և իմաստը: Դիդարկտիկ հեքիաթների ձևով կարելի է ներկայացնել ուսումնական առաջադրանքները:

Հոգեշտկողական հեքիաթներ

Այսպիսի հեքիաթները ստեղծվում են երեխայի վարքի վրա նրբորեն ներգործելու համար: Շտկման տակ այստեղ պետք է հասկանալ երեխայի անարդյունավետ վարքի ձևի փոխարինումը առավել արդյունավետ ձևով:

Հոգեթերապևտիկ հեքիաթներ

Դրանք այն հեքիաթներն են, որոնք թափանցում են հոգու խորքը, բժշկում հոգին և բացահայտում տեղի ունեցող իրադարձությունների խորիմաստությունը: Այսպիսի հեքիաթները ոչ միշտ են միանշանակ և միշտ չէ, որ երջանիկ ավարտ են ունենում, բայց բավականին խորաթափանց են և նպաստում են անձի աճին:

Հեքիաթաթերապիայի ուղվածությունները

Բաժանման վախ, տագնապ, անհանգստություններ՝ կապված միայնակության հետ: Դժվարություններ հասակակիցների հետ փոխհարաբերություններում, թերարժեքության զգացում:

Վախ մթությունից, գիշերային մղձավանջներ, տագնապալիություն:

Անլիարժեքության զգացում, ցածր ինքնագնահատական, անվստահություն:

Կոնֆլիկտային փոխհարաբերություններ, նեգատիվ զգացմունքներ:

Կոնտակտ ստեղծելու դժվարություններ, երկչոտություն:

Նմուշներ, փոձարկում

Ծույլ գետը

Կա՛թ-կա՛թ-կա՛թ... կա՛թ՝ տոթին, կա՛թ՝ հովին, շոգի՛ն, հովի՛ն, օր ու գիշեր կա՛թ-կա՛թ-կա՛թ: Մեկ ձյուն է, մեկ՝ անձրև... Ուզում ես հազար տարի ապրի, մեկ է՝ կյանքից բան չես հասկանա: Կամ էլ՝ մեկ էլ տեսար՝ մի բան հասկացար... Ամբողջ օրը՝ չորս պատի մեջ, ալարում ես մտածե՛լ... ալարո՛ւմ ես: Ալարում ես հաց ուտե՛լ, հաց... ուտե՛լ: Ալարում ես վեր կենալ, նույնիսկ պառկել ալարում ես: Տեսնես՝ ի՛նչ է պատահել. ծույլ- գե՛ տն է վարարել... Ինչ էլ լավ է Ծույլ-գետի վրա՛... Լողում եմ, լողում իմ Ծույլ - նավակով: Ինչքա՛ ն լայն է, ինչքա՛ ն խոր, լայն ու խոր, լայն... ու խոր: Ա՛յ քեզ Ծույլ գետ... Էս ի՛նչ լավ է, լավ... Ես նավակով լողում եմ, լողում, թիակները պտտվո՛ւմ են, պտտվո՛ւմ: Շատ եմ ուզում մի ձուկ որսալ, հսկա մի ձուկ: Ալարում եմ մի ձուկ որսալ, հսկա մի ձուկ: Լավ կլինե՛ր՝ ինքը ընկներ նավակի մեջ: Լավ կլինե՛ր:

Արի ու տես՝ ձուկն էլ մոտիկ չի գալիս: Տեսնես՝ ինչ է մտածում, որ մոտ չի գալիս: Կարող է՝ նա՞ վն է բարձր: Արի փորձեմ մի բան անել: Կացինը վերցրի, նավը ծակեցի: Ջուրն էլ հոսեց ուղիղ նավի մեջ: Նավս էլ սուզվե՛ց ու սուզվեց, իջավ ջրի հատակը: Ձուկն էլ շուրջը՝ ծո՛վ: Դե լավ, ծով չէ, մի մե՛ծ գետ: Մնում է՝ պոչից բռնես, բռնես ու վերջ: Ախր ես էլ հավես չունեմ, այնքան չունեմ, որ ալարում եմ՝ ալարեմ: Պառկել եմ ու մտածում եմ: Մտածում եմ, թե ձկներին ոնց բռնեմ: Գտա...

«Ե՛յ, սառում եմ, ա՛յ ձկներ, լողում եք ու լողում, լողակներդ ու պոչերդ եք շարժում, էդ ո՞նց է, որ չեք ալարում:

Ձկները բլթացրին ու մտածեցին. «Ճիշտ որ, հավես չունենք, ալարում ենք ալարենք»: Պոչերն էլ չշարժեցին, ծուլացան ու ալարեցին, իջա՛ն, իջա՛ն, իջան ջրի հատակը: Նավս լցվեց մի սար ձկով: Պառկել եմ ու ալարում եմ, ալարո՛ւմ եմ, ձուկն էլ՝ շուրջս՝ ալարում է, մեծերը՝ փոքիս, փոքրերը՝ թաթերիս:

«Ըհր՛, - մտածում եմ, - մի լիքը նավ ձուկ եմ բռնել, տուն գնալու ժամանակն է: Ինչպե՞ս գնամ, նավս ծակ է, թիավարել ալարում եմ: Որոշեցի էս Ծույլ-գետի խելքը ուտել: Ասում եմ նրան.

«Ծույլի՛կ-մայրիկ, անուշիկ-քաղցրիկ, գրկեցի՞ր ինձ, գրկիդ մեջ պահեցիր: Բայց, ո՞նց ասեմ, ես քեզ հարմար չեմ: Ամաչում եմ, բայց կասեմ՝ դատող-բանող տղա եմ.

աշխատող ու աշխատող, վարում ու ցանում եմ, այնպես է լինում, որ գիրք էլ եմ կարդում, տառ եմ սովորում, մի քանիսն էլ արդեն գիտեմ: Աշխարհը շուտ գա, ես իմ գործը պիտի անեմ: Ամաչում եմ, որ ասում եմ, բայց ինչ անեմ, այդպիսին եմ...

Խոսքս դեռ չէի ավարտել, Ծույլ – գետն այնպես վախեցավ, այնպես բարկացավ ու ինձ նավիս հետ այնպես շարտեց, այնպես շարտեց, որ հայտնվեցի ոչ թե գետափին, այլ՝ տան շեմին: Էս ի՛նչ լավն է մեր Ծույլ գետը, էս ի՛նչ լավը... Տանն էլ լավ է: Ձկները՝ տնով մե՛կ: Փոքրերը՝ ոնց որ սոխակ, մեծերին էլ ձիերի պես՝ հեծնում ենք, քշում: Էս էլ Ծույլ-գետը:

Թվում է սա պարզունակ հեքիաթ է, համարյա ոչինչ: Երբ ես առաջին անգամ պատմեցի հեքիաթը, որն իմիջիայլոց, մի քիչ բարդ էր իմ սաների համար, սկզբում այնքան էլ ուշադիր չլսեցին, բայց կամա-կամաց կենտրոնացան, վերջում քար լռություն էր խմբում Բայց հետաքրքիրը հեքիաթի քննարկումն էր: Սկսեցինք ծուլությունից, բայց երեխաներն աստիճանաբար անցան իրենց խնդիրներին, անգամ կարոտած հարազատներին:

Ծուլությունը խնդիր դիտարկեցին, գնացին պատիժներ, նեղացվածություն, ներել-չներել... մինչև կարոտ: Ամեն մեկն աննկատ անցնում էր իր խնդրին:

Դեպրեսիան, գուցե ոչ կլինիկականը, այլ նորմալ երիտասարդական փոքր դեպրեսիան մարդկանց խմբի համար հիմնական շարժիչ ուժերից է: Եթե նույնիսկ ոչ առաջ, գոնե ինչ-որ ուղղությամբ: Բայց այստեղ նույնիսկ դա չէ կարևորը: Պարզապես ես կարծում եմ, ո՛չ, համոզված եմ, մեր կրթերից և իրավիճակներից ցանկացածը ապահովված է լուրջ հոգեկան Ֆվայլուտյով: Դա, նախևառաջ էներգետիկ վայրուտան է, այսինքն՝ էներգետիկայի յուրօրինակ աղբյուր, որին միայն դեպրեսիվ վիճակն է հասու: Երկրորդ՝ կյանքի այլընտրանքային պատկերացման վայրուտա է, այսինքն՝ յուրահաստուկ, սովորաբար լիովին զարգացած, և մտածված տրամաբանություն: Իսկ ես այդ պատերնատիվի հեղինակն եմ:

Ստացվեց, որ ծուլությունը այս հեքիաթի վայրուտան էր:

Բովանդակություն

1. Նախադպրոցական կրթության նպատակն ու խնդիրները.....	2-4
2. Նախադպրոցական մանկավարժության հիմունքները.....	5-14
3. Ն/դ դաստիարակության զարգացման ժամանակակից տեսությունը.....	15-20
4. Մանկավարժ դաստիարակի սոցիալական գործառույթները և մանկավարժի ընդհանուր նկարագիրը.....	21-22
5. Խաղը որպես գործունեության առաջատար ձև նախադպրոցական տարիքում: Խաղային տեխնոլոգիա.....	23-26
6. Հեքիաթների ազդեցությունը նախադպրոցականի հոգեկան զարգացման գործընթացում.....	27-31